

կաթողիկոսներուն տեղ Սրապիոնը աթոռ բարձրացուցած էին, անոր նիւթական — վասնզի հարուստ էր — և բարոյական ու ուսումնական կարողութիւններէն օգտուելով կը սպասէին որ անիկա նոր լուսաւորիչ մը հանդիսանար և էջմիածնի բարոյական վերականգնումին հիմը դնէր: Սակայն Սրապիոն չյաջողեցաւ, վասնզի Դաւիթ և Մելքիսեղեկ իրենց պաշտօնանկութենէն զայրացած Շահ Աբասի դիմեցին և անոր միջոցաւ Սրապիոնը վանեցին աթոռէն:

էջմիածինը մնաց նոյն անկարգութեան մէջ, անկարող ուէէ կերպով իր հօտին պաշտպանութեան համար բան մը ընելու:

Սակայն Հայաստանի զանազան վանքերու մէջ առանձնացած եկեղեցականներ, անհատական ճիգերով սկսան բնազդաբար Հայ ազգային եկեղեցին պաշտպանել, աշխատելով եկեղեցական բարեկարգութեան և ժողովրդային բարոյականը բարձրացնելու — որքան կը ներէին դառն և եղկելի ժամանակները:

Անոնք նաև մեծ ճիգեր ըրին ազգին մէջ ուսում տարածելու և դպրոցներ բանալու:

Ազգային վերածննդեան աշխատող այս եկեղեցականներուն մէջ, որոնք ԺԶ. դարու վախճանին և ԺԷ. ի սկիզբը փայլեցան, առաջին տեղը կը գրաւէ յիշեալ